ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 թ.
№ 21 (1137)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի՞ աբովյանականներ,

Ավարտին է մոտենում 2024 թվականը, և մենք կշրջենք մեր տարեգրության ևս մեկ էջ: Աշխարհն այսօր առավել, քան երբևէ, ամենօրյա տագնապների, մարտահրավերների և պայքարի մեջ է. դա արտահայտվում է բոլոր՝ այդ թվում նաև կրթության ոլորտում: Անմասն չմնալով իրողություններից՝ անցնող տարում Մանկավարժական համալսարանն ունեցավ ինչպես դժվարություններ, այնպես էլ կարևոր նվաճումներ և ձեռքբերումներ: Իրագործվեցին ուսումնական և գիտական, ուսանողական և միջազգային մի շարք ծրագրեր, որոնք միտված են ապագա ուսուցչի կրթության որակի բարելավմանը և կրթողի վեհ առաքելության իրականացմանը:

Տարեվերջը յուրատեսակ առիթ է ամփոփելու ձեռքբերումները և այդ ամուր հիմնաքարի վրա կառուցելու նորը, սահմանելու նոր ու առավել բարձր նշաձող, որ պատրաստ լինենք դիմակայելու բարձրագույն կրթության ոլորտում ներկայացվող պահանջներին: Այս աշխատելաոճը մեզ համար օրվա հրամայական է:

Տարեմուտի նախաշեմին եկեք ևս մեկ անգամ վերահիշենք, որ ուսուցիչը մեզանից յուրաքանչյուրի կյանքում ունեցել է բացառիկ ու անփոխարինելի դերակատարում, և մղվենք եկող սերունդների համար նրանց վերարժևորելու, բարի համբավն ու նվիրական աշխատանքը գնահատելու կարևոր գործին:

Ամանորն առիթ է ոչ միայն ամփոփելու անցնող տարին, այլև նախանշելու հաջորդ տարվա անելիքները: Եկեք յուրաքանչյուրս մեզ համար առաջնահերթություն սահմանենք պատասխանատվության բարձր զգացումը՝ դեպի կրթությունն ու աշխատանքը: Կիրթ ու բանիմաց սերունդներն են հայ ժողովրդին հասցրել 21-րդ դար, բազմապատկենք մեր ջանքերն ու շարունակենք այդ ընթացքը:

Թող աշխարհն ու մեր երկիրը 2025 թվականին լինեն խաղաղ, անվտանգ, աննկուն կամքով ու անսասան հավատով:

Շնորհավո՞ր Ամանոր և Սուրբ Ծնունդ: Մաղթում եմ խաղաղություն և առողջություն, սեր և երջանկություն, ուրախ օրեր և նվաճումներ:

Սրբուհի ԳԵՎՈՐԳՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր

Հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստում

ՀՊՄՀ-ում Հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստը մեկնարկեց «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի հանդիսավոր բացմամբ:

ԿԳՄՍ նախարար, Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը կարևորեց, որ Խորհրդի կազմը քննարկումներից և խորհրդակցություններից բացի, տեղում ծանոթանա բուհում կատարվող աշխատանքներին:

Նախարարը նկատեց՝ Կենտրոնը կնպաստի բնագիտական, ճարտարագիտական, տեխնոլոգիական ուղղություններով ուսուցիչների ներգրավման քաղաքականության իրականացմանը, կրթության որակի բարելավմանը: Նախարարը հավելեց, որ այս եզակի կենտրոնը կդառնա ռեսուրս կենտրոն ոչ միայն ուսանողների կրթության, այլև ուսուցիչների վերապատրաստման համար, ինչը նկատելի փոփոխություններ կբերի բնագիտական առարկաների դասավանդման գործում:

Խորհրդի նիստը շարունակվեց ՀՊՄՀ 2024 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ տեսաֆիլմի դիտումով: Ապա ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը Խորհրդին ներկայացրեց ֆինանսական հաշվետվությունը, ըստ որի վերջին 4 տարվա համեմատությամբ, ընթացիկ տարում գրանցվել է դրամական մուտքերի աճ: Ռեկտորը ➢2

Գիտական խորհրդի տարեվերջյան նիստում

Դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ Գիտական խորհրդի տարեվերջյան նիստը: Մինչ օրակարգին անցնելը ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց բուհի հոբելյարներին և մաղթեց նորանոր ստեղծագործական ձեռքբերումներ գալիք տարում:

Կուլտուրայի ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանը ներկայացրեց Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի թեկնածու, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սյուզաննա Գրիգորյանին, որը 2022-2023 թվականներին ստանձնել էր ամբիոնի վարիչի պարտականությունները: Վերջինս ներկայացրեց ամբիոնի առաջիկա տարիների տեսլականը՝ կատարված աշխատանքի համապատկերում խոսելով առաջիկա անելիքների մասին: Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնողը խոսեց արվեստ-արհեստ մասնագիտության մասին՝ ընդգծելով՝ միակ աբիոնն է, որ պատրաստում է արվեստի մանկավարժներ, և այսօր դպրոցներում ներդրվել է «Արվեստ» առարկան, բայց այդ առարկայի մասնագետներ առայժմ չկան: Առաջիկայում ամբիոնը կպատրաստի մասնագետներ այդ առարկան դասավանդելու համար:

Փակ գաղտնի քվեարկությամբ, 44 կողմ, 3 դեմ հարաբերակցությամբ դոցենտ Սյուզաննա Գրիգորյանն ընտրվեց ամբիոնի վարիչ:

Ձեկուցումով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, որը ներկայացրեց 2022-2023 թթ. Ֆինանսական հաշվետվությունը՝ ընդգծելով՝ այդ ընթացքում պահպանվել է ուսանողների քանակը, գրանցվել է աճ, և այս պահին գրանցված է 5305 ուսանող:

ԲՏԵՄ մասնագիտությունների գծով այս տարի համալսարանը կտրուկ աճ է ունեցել. Սրբուհի Գևորգյանը ➢2

ՀԱԿՈԲ ՍՐԱՊՅԱՆ

Ձոներգ Ամանորի

Այս նոր տարվա սեմին բացեմ սրտիս սուփրան,
Մուրացիկնե՞ր, ասեմ, եկե՛ք, ի՛մ տուն եկեք,
Իմ հոգու մեջ դեռ կա խղճի մի բուռ մերան,
Եկեք մի-մի բաժակ դառը գինի խմենք:

Աստանդակա՛ն եղբայր, ասեմ, գյուլիստանցի՛,
Դու, որ տաք օջախդ շան երախում թողել՝
Տխո՞ւր մի երգ ասեմ, արի, քո կենացին,
Դեռ ապրում ենք, դեռ կանք, վրեժը չի՞ մեռել...

Ու դո՛ւք, արծի՛վ տղերք, որ լեռները ելաք,
Ձյան հյուսքերը ճեղքած՝ իջեք բարձունքներից,
Բաժակներդ լցնեմ հոնի ընտիր արաղ
Ու համբուրեմ ձեր էն ճակատները անբիծ...

Որդեկորույս մայրեր, հարսնե՛ր սևասգում,
Ամանորի սեմին ծնկեմ ես ձեր առաջ,
Արցունքները ձեր տաք թող մարեն իմ հոգում,
Աղաչում եմ, այսօր պետք չէ արցունք ու լաց...

Եռաբլուր ելնեմ, ազգի պարծանք խևե՛ր,
Ինձ ներեցեք, ասեմ, որ ձեր կողքին չեղա,
Բայց անմահը դուք եք, իմ սրբանուն Դևե՛ր,
Իսկ մենք՝ մահկանացու ու ձեր առաջ մեղա՞...

Եվ ձե՛զ կոչեմ, այրե՛ր Հայոց արքունիքի,
Արժա՛ն եղեք, արժա՛ն, ժողովրդին այս թանկ,
Ախր նա՛ ձեզ տվեց պատմուճանը փառքի,
Որ իր բախտի հանդեպ հավերժ խոնարհ մնաք...

Ամանորի սեմին բացեմ սրտիս սուփրան,
Գիտեմ, հիմա դուռս մի որբուկ կբախի,
Ու ես նրան գրկած՝ խնդությունից կուլամ,
Կհամբուրեմ նրա արցունքները վախի...

Ավագ դպրոց-վարժարան-30

Խորհրդանշական ցուցահանդես ավագ դպրոց-վարժարանում

ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջոցառումների շարքում առանձնահատուկ էր դպրոցի «Նկարչություն և դիզայն» հոսքի սովորողների ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսը, որը նաև տարեվերջյան յուրահատուկ հաշվետվություն էր և խորհրդանշական՝ հոբելյանի կապակցությամբ: Ներկայացված էր և՛ շրջանավարտների, և՛ սովորողների շուրջ 150 աշխատանք:

Ինչպես նշեց կերպարվեստի ուսուցիչ Նաիրի Բալաբեկյանը՝ «Ներկայացված էին ոչ միայն լսարանային, ակադեմիական մոտեցումներով արված, այլև ստեղծագործական աշխատանքներ՝ տարբեր ոճերի, տեխնիկայի և նյութերի բազմազանությամբ ու կիրառմամբ»:

«Ցուցահանդեսին ներկայացված աշխատանքներն արվել են մեծ սիրով ու նվիրումով: Մենք բոլորս համախմբվում ենք այն ամուր հենքի վրա, որը դրվել է տիկին Նաիրա Սաֆարյանի կողմից: Սիրով կլսենք բոլորի կարծիքները, որոնք մեզ կպարտավորեցնեն էլ ավելի լավ աշխատել»,-ասաց օրվա «մեղավորը»:

Ն. Բալաբեկյանը նշեց, որ հպարտություն է ունենալ նման լավ աշակերտներ և ապագայում տեսնել նրանց ոլորտի մասնագետների ու լավ մանկավարժների շարքերում:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց ներկաներին հոբելյանական ցուցահանդեսի առթիվ և ընդգծեց սերնդի գեղագիտական ճաշակի նմանօրինակ դրսևորումը: Ռեկտորը նկատեց՝ ցուցահանդեսում տեսանելի է պրոֆեսիոնալ ձեռագիր՝ դասականի և գույների յուրահատուկ ընկալմամբ ու մտահղացումների ճիշտ ներկայացմամբ:

«Ներկայացված աշխատանքները հրաշալի էին, բազմազան, շրջապատող աշխարհի հանդեպ մեր ➢2

Մանկավարժականում էր Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը

Դեկտեմբերի 19-ին Մանկավարժական համալսարանի ռեկտորն ընդունեց ՌԴ Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Եվգենի Նիժնիկին: Երկխոսություն ծավալվեց համալսարանների մանկավարժական գործունեության, երիտասարդ մասնագետների պատրաստման գործընթացի, տարբեր երկրների ու համալսարանների հետ կապերի շուրջ: Գործնական խոսակցություն ծավալվեց երիտասարդներին դեպի գիտական գործունեություն ուղղորդելու, նրանց դրամական և այլ միջոցներով աջակցելու և խրախուսելու շուրջ, որի մասին իրենց համալսարանի փորձը ներկայացրեց ռուս գործընկերը: Վերջինս ներկայացրեց իրենց համալսարանի գործունեությունը, միջոցառումները, կազմակերպվող ռուսաց լեզվի օլիմպիադան, որին մասնակցում են նաև Հայաստանի դպրոցականները՝ ընդգծելով՝ հայ-ռուսական մշակութային երկխոսության ընդլայնումը:



ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը խոսեց տարբեր համալսարանների հետ բուհի գործընկերության մասին՝ կարևորելով ուսանողների փոխշփումները այլ համալսարանների ուսանողների հետ, նաև ընդգծելով, որ ուսանողական շփումները բուհերի շարունակական գործակցության ամենամեծ գրավականն են:

ՀՊՄՀ ռեկտորը խոսեց Մանկավարժական համալսարանի միջազգային կապերի մասին, միաժամանակ ընդգծեց Մոսկվայի և ՌԴ այլ համալսարանների հանդեպ իրենց կողմից ցուցաբերվող հատուկ վերաբերմունքը: Ռեկտորը նաև ցավով նկատեց՝ 70-80-ականների երիտասարդների ակտիվությունն այսօր չկա, որովհետև այսօրվա երիտասարդությունը տեխնոլոգիաները նախընտրում է գիտական գործունեությունից: Թեև Հայաստանում կրթական բարեփոխումներ են ընթանում, այնուամենայնիվ, ուսուցիչը մնում է ցածր վարձատրվող մասնագետների շարքում:

Եվգենի Նիժնիկին նշեց, որ իրենք հեղափոխական գործունեություն չեն ծավալում, բայց բավականին լուրջ բարեփոխումներ են իրականացնում դպրոցական կրթության ոլորտում՝ միաժամանակ խրախուսելու դրդապատճառներ գտնում՝ մագիստրոսներին և ասպիրանտներին ուղղորդելու դեպի գիտության ոլորտ:

Նա հանգամանորեն խոսեց իրենց բուհում սահուն սերնդափոխության՝ մեծերի փորձի վրա հենված երիտասարդ մասնագետների կայուն առաջընթացի մասին:

Ռուս գործընկերը հանգամանորեն կայացրեց իրենց առաջիկա ծրագրերի ու տարբեր նախագծերի ընդհանուր պատկերը՝ հույս հայտնելով, որ Մանկավարժական համալսարանը կներառվի այդ միջոցառումներում: Ռեկտորը նաև հույս հայտնեց՝ առաջիկայում իրականացնել համագործակցություն ամբիոնների մակարդակով, որի արդյունքում դիպլոմային աշխատանքների համատեղ պաշտպանություն կիրականացվի, ապա հավելեց՝ հետաքրքրված են լեզվաբանության հարցերով և հատկապես արդյունավետ կլինի երկու բուհերի մասնագետների փոխշփումները:

Նա խոսեց «Ուշինսկի» միջազգային երիտասարդական ակումբի, «Ամառային դպրոց»-ի հետ համագործակցության, առաջիկայում իրականացվելիք միջազգային գիտապրակտիկ կոնֆերենսների, համատեղ տարբեր նախագծերի իրականացման աշխատանքների մասին՝ կարևորելով Մանկավարժական համալսարանի մասնակցությունը իրենց առաջիկա նախագծերին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստում

➢1 վստահեցրեց՝ կարևոր են համարում միջոցների արդյունավետ պլանավորումն ու ծախսը՝ ի շահ բուհի և որակյալ կրթության: Սրբուհի Գևորգյանը ուսանողների թվաքանակի դինամիկան նախորդ տարիների համեմատ՝ դրական գնահատեց:

Խորհուրդն էլ բավարար գնահատեց ընթացիկ տարվա տարեկան հաշվետվությունը, 2024 թվականի ֆինանսական հաշվետվությունը և հաստատեց ՀՊՄՀ-ի 2025 թվականի բյուջեն:

ՀՊՄՀ 2025 թվականի կառուցվածքային փոփոխություններն ու հաստիքացուցակը Խորհրդի անդամներին ներկայացրեց բուհի Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Պրոռեկտորը կառուցվածքային փոփոխությունները պայմանավորեց բուհի առաքելությամբ, որդեգրած ռազմավարությամբ և ապագա ուսուցիչների պատրաստման ժամանակի հրամայականով, ընդգծեց՝ դրա համար հիմք են հանդիսացել նաև ուսումնասիրություններն ու կատարված հետազոտությունները:

Մարիաննա Հարությունյանը անհրաժեշտություն համարեց բուհում՝ ԲՏԵՄ կենտրոնի և ուսուցիչների եւ վերապատրաստման բաժնի հիմնումը, ինչպես նաև որոշ ստորաբաժանումներում հաստիքների ավելացումը, ինչը հաստատվեց Խորհրդի նիստում:

Քննարկվեց նաև ՀՊՄՀ-ի անվանափոխության հարցն ու այն Խ. Աբովյանի անվան կրթության և հասարակական գիտությունների հայկական պետական համալսարան վերանվանելու տարբերակը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը տեղեկացրեց, որ ներկայացված տարբերակը քննարկվել է բուհի տարբեր օղակներում:

Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանի դիտարկմամբ՝ մանկավարժություն բառն ու բուհի անվանումը չեն արտացոլում կառույցի գործունեության առանցքում ընկած հնարավորությունների ողջ սպեկտորը, ինչպես նաև այն նոր մասնագիտությունների ներդրման հնարավորությունները, որոնց կարիքն այսօր կա:

Ժաննա Անդրեսյանը կարծում է, որ 100-ամյա բուհն անվանափոխելով չպետք է շեղվել դրա առաքելությունից, միևնույն ժամանակ անհրաժեշտ համարեց հաշվի առնել կառուցվածքային հետագա փոփոխությունները:

Խորհուրդն ի գիտություն ընդունեց բուհն անվանափոխելու հարցն ու որոշեց՝ մեկամսյա ժամկետում աշխատանքային խմբի քննարկման արդյունքում հանդես գալ գործընթացի վերաբերյալ փաթեթային առաջարկով:

Ամփոփելով տարեվերջյան նիստը, ԿԳՄՍ նախարար, Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը գալիք տարում մաղթեց հաջողություններ և հույս հայտնեց, որ Խորհուրդն իր գործունեությամբ էլ ավելի կնպաստի բուհի զարգացմանը:

«Ընթացիկ տարին հագեցած էր բուհի համար»,-նշեց նախարարն ու հավելեց՝ ուսումնական տարվա կեսում են.ա-նելիքները շարունակվում են:

Խորհրդանշական ցուցահանդես ...

➢1 աշակերտների գեղագիտական ընկալման առանձնահատկություններով, որոնք պայմանավորում են հայրենիքի ու բնաշխարհի նկատմամբ նրանց տածած զգացմունքները»,-ասաց ռեկտորը՝ ընդգծելով, որ հայրենիքի ընկալումը ներկայացված էր ամենաթանկ ու վեհ արժեքներով:

Ամփոփելով խոսքը՝ Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց մանկավարժներին՝ շքեղ ցուցահանդեսի կազմակերպման, դպրոցի ղեկավարությանը՝ ստեղծարարական գործունեությանն աջակցելու, իսկ աշակերտներին՝ ներկաներին ջերմ պահեր պարգևելու համար:

«Աշակերտը աչքը պետք է բացի և տեսնի գեղեցիկը,-ասաց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը: Գեղարվեստը սեր է և ջերմություն, վարժարանի կերպարվեստի բոլոր չորս ուսուցիչներն ապահովում են վարժարանի գեղարվեստական ներկայացումը և տեսքը»:

Դեկանը տրամաբանական և օրինաչափ համարեց այն ընթացքը, որ ավագ դպրոց-վարժարանի այս սաները վաղը ուսանելու են իրենց ֆակուլտետում, իսկ ցուցահանդեսն ու նմանօրինակ աշխատանքները պատվաբեր են և՛ դպրոցի, և՛ ֆակուլտետի համար: Ապագա ուսուցիչների համար այս ցուցահանդեսը օրինակելի գործընթաց է՝ ամփոփեց Արա Հակոբյանը:

Ներկաները շրջեցին դպրոցի սրահներում, հիացան սաների ստեղծագործությունների հետաքրքիր գույների բազմազանությամբ, որոնք տարբերվում էին իրարից զգացողություններով, ջերմությամբ ու ասելիքով:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Գիտական խորհրդի տարեվերջյան նիստում

➢1 ներկայացրեց ընդհանուր ուսանողների և առաջին կուրսեր ուսանողների դինամիկան՝ ըստ տարիների:

Ռեկտորը ներկայացրեց նաև ֆինանսական մուտքերի և ելքերի դինամիկան՝ փաստելով, որ այս տարի գրանցվել է ամենամեծ մուտքը, ապա ներկայացրեց դրամական մուտքերի բաշխվածությունը:

Սրբուհի Գևորգյանը ընդգծեց՝ միջազգային դրամաշնորհների մուտքերի հաշվին հնարավոր է դառնում արդյունավետ կերպով իրականացնել ուսումնական գործընթացները՝ համալսարանը հագեցնելով նոր տեխնոլոգիաներով և այլ կահավորանքով:

Նա կարևորեց ֆինանսական միջոցների արդյունավետ կիրառումը՝ ի շահ համալսարանի, միաժամանակ ներկայացրեց 2024 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը: Գիտական խորհրդի անդամները քվեարկեցին ի գիտություն:

Գիտահետազոտական կենտրոնի հաշվետվությունը ներկայացրեց ՀՊՄՀ Գիտական կենտրոնի ղեկավար Կամո Վարդանյանը: Խոսելով ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող բազային ծրագրերի մասին՝ զեկուցողը ներկայացրեց բուհի բազային լաբորատորիաների գործունեությունը, իրականացված մեծածավալ աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը գիտաժողովներին, միջազգային գիտաչափական շտեմարանի պարբերականներում հրատարակումները:

Գիտական խորհուրդը գործընթացը գնահատեց բավարար:

Ընթացիկ հարցերում Գիտական խորհրդի անդամները լսեցին նաև բուհի անվանափոխության վերաբերյալ հարցը: Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց առաջարկների վերաբերյալ ստորաբաժանումների կարծիքները, դիտարկումները: Արդյունքում՝ 45 կողմ, 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ, հավանության արժանացավ Խ. Աբովյանի անվան կրթության և հասարակական գիտությունների հայկական պետական համալսարան անվանումը:

Բուհի վարած քաղաքականություն, ընթացիկ տարվա գործունեությունը, ուսումնագիտական ոլորտի նորարարությունները, միջազգային համագործակցության ձեռքբերումները ներկայացվեց Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի պատրաստած տեսաֆիլմով:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը դարձավ 15 տարեկան

Մանկավարժական համալսարանի Հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը դարձավ 15 տարեկան: Այդ առիթով ֆակուլտետի և ամբիոնի նախաձեռնությամբ համալսարանում կազմակերպվել էր ցուցահանդես՝ «Սոցիալական իրականությունը մեր աչքերով» թեմայով: Սոցիալական թեմայով ուսանողական ֆոտոմրցույթը ուղեկցվում էր հեղինակ ուսանողների մեկնաբանություններով:

«Շատ հետաքրքիր է սոցիալական իրականության ար-

տացոլումը մասնագիտական դաշտում՝ իրենց տեսանկյունից, մեկնաբանությունների մեջ էլ արտացոլված է այդ յուրահատուկ ընկալումը, որովհետև սոցիոլոգիան և սոցիալական աշխատանքը այն մասնագիտություններն են, որոնք նաև մասնագիտական դաշտով են ընկալում իրականությունը»,-ասաց ամբիոնի վարիչ Գայանե Խաչիկյանը:

Սրահում ներկայացված էր ուսանողների 10 ֆոտոաշխատանք, որոնք ներկայացնում էին մերօրյա սոցիալական իրականությունը: Ամբիոնի դասախոսներից ընտրված հանձնաժողովը բազմաթիվ նկարներից ընտրել էր 10-ը՝ հաշվի առնելով մերօրյա սոցիալական իրականության ընդգծումը, իրենց տեսանկյունից նկարի բացատրության յուրահատկությունը:

«Սոցիոլոգիան և սոցիալական աշխատանքը այն ուղղություններն են, որոնք երկուսն էլ սոցիումն են ուսումնասիրում, սոցիալական մարտահրավերների առաջնային գծում են, և բնականաբար, յուրահատուկ են իրենց ընկալումները»,-հավելեց ամբիոնի վարիչը:

Նա փաստեց՝ սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք մասնագիտություններն այսօր առավել քան երբևէ պահանջարկ ունեն: Մեր երկիրը վերջին տարիներին բազմաթիվ մարտահրավերների միջով անցավ, և այսօր տարբեր թիրախային խմբերի հետ աշխատանքում մեր շրջանավարտներն առաջնագծում են հոգեբանների հետ. նրանք փորձում են շահառուների պահանջները բավարարել, անձանց, որոնք դրա կարիքն ունեն: Իսկ սոցիոլոգիան համաշխարհային պահանջարկ ունեցող գիտություն է. ոչ մի հասարակություն չի կարող գոյություն ունենալ առանց սոցիոլոգիայի և սոցիոլոգիական հետազոտությունների:

Ամբիոնը նաև հրավիրել էր իր բազմաթիվ շրջանավարտներին, որոնք այսօր մասնագիտական ոլորտում աշխատում են: Նրանք ներկայացրին իրենց հաջողությունները: Անցկացվեցին գործնական հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, որոնք վարեցին Գառնիկ Նալբանդյանը, Գայանե Ասատրյանը, Սառա Շմավոնյանը:

Այնուհետև նիստերի դահլիճում դասախոսներին, ուսանողներին ու շրջանավարտներին հոբելյանի առթիվ շնորհավորեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Ռեկտորը համալսարանի համակազմի անունից շնորհավորեց ամբիոնի 15-ամյակի առթիվ: Նա խոստովանեց՝ Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը կայացման առումով ամբողջովին իր անհատական պատմության մի մասն է, քանի որ այդ ժամանակաշրջանում պատիվ է ունեցել ղեկավարել ֆակուլտետը: Ռեկտորը ներկայացրեց սոցիոլոգների մուտքը ֆակուլտետ մի ժամանակահատվածում, երբ նրանք ներկայացված էին փիլիսոփայության ամբիոնում և սոցիոլոգիայի զարգացմանը միտված ձեռնարկներ էին իրականացնում: Սրբուհի Գևորգյանը խոսեց ֆակուլտետում ձևավորված սոցիոլոգիայի առաջին լաբորատորիայի, առաջին կրթական չափորոշիչների ձևավորման մասին, որոնք բավականաչափ բարդ երկխոսություն ձևավորեցին սոցիոլոգների և հոգեբանների միջև:

Սրբուհի Գևորգյանը փաստեց՝ հետագայում ամբիոնը համալրվեց իրենց իսկ շրջանավարտներով, որոնք իրենց ներդրումն են ունեցել ամբիոնի գործունեության ընթացքում: Լինելով ամենաերիտասարդ ամբիոններից մեկը՝ այդ տարիներին իր ակտիվությամբ այն գերազանցում էր շատերին:

Իրապես շատ կարևորում եմ ձեր մասնագիտական տիրույթը՝ իր խոսքն ամփոփեց ռեկտորը՝ սոցիոլոգներին հորդորելով անընդհատ զարգացնել ու խորացնել գիտելիքները՝ մասնագիտական դաշտում ապահովելով իրենց առաջընթացը:

Ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը:

«Սոցիալական իրականությունը և՛ կառույցներ են, և՛ երևույթներ, և՛ գործընթացներ, որոնցում մարդիկ փոխկա-

պակցված են և փոխազդում են որոշակի ձևով: Այն կարող է հանդես գալ որպես հարաբերությունների ընթացիկ գործընթաց և ձև, մարդկանց փոխազդեցություն՝ այստեղ և հիմա, հարաբերությունների գործընթաց՝ պատմական զարգացման և փոփոխության մեջ»,-ընդգծեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզան Պետրոսյանը՝ ողջունելով ամբիոնի հոբելյանի առթիվ:

Ներկաները դիտեցին «Ամբիոնի 15-ամյա ուղին» խորագրով ֆիլմ:

Ելույթ ունեցան ամբիոնի դասախոսները, շրջանավարտների հետ քննարկեցին ոլորտին վերաբերող հարցեր, իրար հետ կիսեցին հարազատ դարձած հուշեր, ապա քվեարկությամբ ամփոփեցին մրցույթի արդյունքները:

Լուսանկարչական մրցույթի ամփոփման արդյունքները ներկայացրեց ամբիոնի վարիչ Գայանե Խաչիկյանը՝ 1-ին տեղի մրցանակը հանձնելով Գայանե Պողոսյանին՝ «Ապագայի ուժն անցյալի ձեռքերում» լուսանկարի համար: 2-րդ տեղում Լիանա Գրգորյանն էր՝ «Կրթության պահանջ» լուսանկարով, իսկ 3-րդ տեղը զբաղեցրեց Շաղիկ Կարոյանը՝ «Անհավասարություն քարե մետաֆորում» լուսանկարով:

Ուսանողների կարծիքով՝ սոցիալական իրականությունը երբեմն տեսնում են միայն մասնագետները: Նրանք փոքրիկ հարցախույզի արդյունքում ներկայացրին՝ ինչ է սոցիոլոգիան իրենց համար, ձևակերպեցին այն՝ ելնելով ուսումնառության սեփական փորձից ու ընկալումներից՝ սոցիոլոգիան պայքար է, անսահմանություն, հստակեցում է իրացման ճանապարհին, մարդկային հարաբերությունները խորապես վերլուծելու գիտություն է, լույսի ճանապարհ...

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Մանկավարժականում քննարկեցին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագծերը

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանը: Բուհի ղեկավար և դասախոսական կազմի հետ հանդիպմանը նա ներկայացրեց կառույցի ներկայիս գործունեությունն ու ապագա նախագծերը:

Բանախոսն անդրադարձավ երեք կարևոր ուղղությունների՝ գիտական ստորաբաժանումների ենթակառուցվածքի վերազինմանը, մարդկային ռեսուրսին, խոսեց իրավական դաշտի կարգավորումների մասին:

Արթուր Մովսիսյանը, անդրադառնալով պետական ֆինանսավորման արդյունավետությանը, նշեց՝ վերջին տարիներին ոլորտին հատկացվող պետական միջոցների ծավալը պարբերաբար աճել է: Խոսելով գիտական արդյունքների դինամիկայի մասին՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալը նկատեց՝ վերջին մի քանի տարիներին հրապարակումների թվի կայուն աճ է գրանցվել:

Վերջինս ներկայացրեց նաև Կոմիտեի դրամաշնորհային ծրագրերի կառուցվածքը, անդրադարձավ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ներգրավված աշխատողների ատեստավորմանն ու աշխատավարձերի նորմավորմանը, 2024 թվականին ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրերի՝ ընդգծելով, որ նախորդ տարվա համեմատ՝ ընթացիկ տարում երաշխավորվել է 65 ծրագիր:

Բանախոսը Մանկավարժական համալսարանի համար դրական համարեց բազային ծրագրերի շարունակականությունը:

Խոսելով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրատարակությունների համար աջակցության ծրագրին և ոլորտում սպասվող փոփոխություններին բանախոսը նշեց՝ աշխարհի լավագույն եռյակի մեջ մտնող գիտական հրատարակիչներից երկուսի հետ արդեն իսկ բանակցություններ են ընթանում, ինչի շնորհիվ հայաստանյան հետազոտողները հասանելիություն կստանան միջազգային բարձր վարկանիշավորմամբ ամսագրերում տպագրված հրապարակումներին:

Անդրադարձ եղավ նաև 2025 թվականի ծրագրերին, Արթուր Մովսիսյանն առանձնացրեց պետության պահանջարկի հիման վրա արվող հետազոտությունները՝ պետական տարբեր մարմինների հետ համագործակցությամբ, պրոֆեսորների կարճաժամկետ այցելությունների և դասախոսությունների, ինչպես նաև հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների ամսագրերի՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկման ծրագրերը:

Ավանդական 5-րդ գիտաժողովում

Օտար լեզուների ֆակուլտետի Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը նախաձեռնել էր գիտաժողով՝ նվիրված Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի և լեզվաբանության արդի հիմնախնդիրներին:

Արդեն հինգերորդ անգամ անցկացվող միջազգային ամենամյա գիտաժողովը ավանդույթ է դարձել, որի ընթացքում քննարկվում են ռուսաց լեզվին և դասավանդման մեթոդներին վերաբերող զանազան հարցեր, վերլուծվում հետազոտական տեսանկյունից, անցկացվում բանավիճային քննարկումներ, ամփոփում կարևոր եզրահանգումներով:

Պուշկինի անվան լսարանում հավաքվել էին ՀՊՄՀ և հանրապետության այլ բուհերի դասախոսներ, ներկա էին ուսանողական համակազմի ներկայացուցիչներ, իսկ առցանց տարբերակով մասնակցում էին նաև Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայի Պուշկինի անվան Ռուսաց լեզվի ինստիտուտի դոցենտ, բանասիրական գի-

տությունների թեկնածու Դարյա Տրյուխանովան և «Սովորում եմ ռուսերեն թվային գրագիտության հարթակում» նախագծի առաջատար մեթոդիստ Ռեգինա Շամսուտդինովան, որոնք երկուսն էլ Նաիրա Դալյանի ուսանողներն են եղել:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու և մանկավարժական գիտությունների դոկտոր Նաիրա Դալյանը նկատեց՝ այսօր ռուսաց լեզվի կարգավիճակը պարզ չէ ոչ ՌԴ-ում, ոչ էլ աշխարհում, և հարցը կախված է ոչ այնքան նրանից, թե որքան մարդ է խոսում նրանով կամ ցանկանում սովորել այդ լեզուն, ավելի շուտ հարցն այն է, թե ինչպիսին է այդ լեզուն և ինչպիսին կլինի հիմա: Ն. Դալյանը մեջբերեց ռուս մեծ փիլիսոփա, լեզվաբան Վլադիմիր Սոլովևից. «Լեզու կրող մարդիկ պետք է տիրապետեն 3 ոճի՝ բարձր՝ խոսելու Աստծո հետ, միջին՝ շրջապատի հետ հաղորդակցվելու, ցածր՝ ինքն իր հետ մենախոսելու կամ երկխոսելու համար»: Ցավոք, Ն. Դալյանը նկատեց. «Ժամանակները փոխվել են՝ բարձր ոճն այլևս գոյություն չունի, միջին ոճը գրավել է առաջինի, իսկ ցածր ոճն այսօր գրավել է միջինի տեղը: Այս հարցերն են, որ այսօր մտահոգում են ռուսաց լեզվի մասնագետներին և մենք՝ այդ լեզուն դասավանդողներս էլ անտարբեր չենք վերոհիշյալ հարցի նկատմամբ, ծանոթ ենք ռուս մշակույթին՝ ռուս գրականության անանց արժեքներով, և մենք բնականաբար, լսարանում արտահայտում ենք այդ խոսքի ողջ գեղեցկությունն ու հմայքը»:

Ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը կարևորեց 5-րդ անգամ անցկացվող ձեռնարկը՝ լեզվաբանության և դասավանդման մեթոդներին վերաբերող կարևոր հարցերի քննարկման տեսանկյունից և ընդգծեց գիտաժողովի ներկայացուցչական կազմի ներկայությունը:

Գիտաժողովին ելույթ ունեցավ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը, որը նկատեց՝ ֆակուլտետը երիտասարդացել է, բայց Ռուսաց լեզվի ամբիոնը գրեթե համալսարանի հասակակիցն է: Նա նշեց ամբիոնի դասախոսական կազմի մասնագիտական մեծ փորձը՝ լեզվաբանության ու գրականագիտության դասավանդման ասպարեզում:

«Ինձ համար պատիվ է մասնակցել նոր գիտաժողովի, նոր միջոցառման, ավանդույթների արմատավորմանը, երբ համախմբվում ենք մասնագիտական խնդիրների քննարկման շուրջ,-ասաց դեկանը, ապա մեջբերեց Վ. Լիխաչովից. «Առանձնահատուկ հաճույք է սեփական լեզվի կատարելությունը»: Եվ ես ուրախ եմ, որ ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործում մեր Ռուսաց լեզվի ամբիոնը հանրապետության առաջատարն է ռուսաց լեզվի կատարելագործման ու լեզվական նորությունների դասավանդման առումով»:

«Լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այն հարստացնում է մարդու ինտելեկտը, այն ձևավորում է մտածողությունը, և այդ տեսանկյունից, ես կարծում եմ, մեր երկխոսությունը, քննարկումները կամրապնդեն մեր մեջ լեզվի առանձնահատուկ դերն ու մշակութային «կլաստը», որն իմ սերնդի համար անչափ կարևոր է ու անփոխարինելի»,-ամփոփեց դեկանը:

Հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը: Նա ներկայացրեց «Բուրմունք» հասկացությունը տարբեր մշակույթների մեջ, այն, ինչ կատարվում է ռուսական լեզվական պատկերում, հայերենում և անգլերենում, համեմատեց բառային միավորները և հստակ մեջբերումներով ցույց տվեց, թե ինչպես է դա արտահայտվում հայ, ռուս, անգլերեն գրականության մեջ:

Կուլտուրայի ֆակուլտետից բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտաշես Մարտիրոսյանը ներկայացրեց «Իրական անձինք, մարդիկ» բառաիմաստային խմբի մի քանի բառույթների բառարանագրական մշակումները հայերենում զեկուցումը: Նա խոսեց բառերի իմաստավորության վրա ազդող գործոնների մասին, ներկայացրեց իմաստափոխության մոտեցումները՝ պայմանավորված լեզվական և արտալեզվական գործոններով, մասնավորապես անդրադարձավ մարդու ազդեցությանը մայրենի լեզվի վրա՝ գիտակցական և ոչ գիտակցական կարգավորմանը՝ եզրահանգելով՝ լեզուն և մտածողությունը հիմնված են հակադրամիասնության մեջ: Զեկուցողն անդրադարձ արեց նաև լեզվի էվոլյուցիային, որն ի վերջո տանում է դեպի որակական փոփոխությունների:

Բոլոր զեկուցումների շուրջ բանավեճի մթնոլորտում ծավալվեցին հետաքրքիր քննարկումներ:

Գիտաժողովի արդեն տպագրված ժողովածուի մեջ զետեղվել էր 12 գիտական հոդված, որոնք բոլորն էլ մեծ հետաքրքրություն էին ներկայացնում քննարկվող թեմայի համատեքստում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Աշխատանքային այց Չեխիա

Դեկտեմբերի 9-13-ը Erasmus+ T4Green (Հայաստանում և Մոլդովայում մանկավարժական կրթության բարեփոխումը հանուն կանաչ և թվային անցման) ծրագրի շրջանակներում Հայաստանի և Մոլդովայի կրթական հաստատությունների աշխատանքային խմբերը հյուրընկալվել էին Չեխիայի Մասարիկի համալսարանում:

Ծրագիրը համակարգում է Մանկավարժական համալսարանը:

Բուհի աշխատանքային խումբը գլխավորում էր Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Այցի նպատակն էր ծանոթանալ Չեխիայում մանկավարժական կրթության բարեփոխումների իրականացման փորձին՝ կանաչ և թվային անցման առաջնահերթությունների շրջանակներում: Բացի այդ, Պորտուգալիայի, Իսպանիայի և Չեխիայի գործընկերների համակարգմամբ իրականացվեցին խմբային աշխատանքներ, որոնք ուղղված էին մանկավարժական կրթության ազգային հայեցակարգի մշակմանը:

Վերապատրաստման ընթացքում Մասարիկի համալսարանի կրթության ֆակուլտետի դեկան Սիմոնա Կորիչանկովան ներկայացրեց ֆակուլտետի ռազմավարական ուղղությունները և կրթական ծրագրերը՝ մասնավորապես կանաչ և թվային անցման շրջանակներում: Համալսարանում կայուն զարգացման տարբեր նախաձեռնությունների մասին խոսեց նաև ռեկտորատի ներկայացուցիչ Ռիչարդ Հուբլը:

Մասնակիցներն այցելեցին նաև «ԼԻՊԿԱ» բնապահպանական կրթության կենտրոն և «Թեյրեսիաս» կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների աջակցության կենտրոն՝ ծանոթանալու ներառական կրթության մոտեցումներին:

Ծրագրի կառավարման հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ նաև ծրագրի համակարգման հանդիպումը, որի ընթացքում ամփոփվեցին նախորդ վեց ամիսներին իրականացված աշխատանքները և պլանավորվեց հաջորդ աշխատանքային փաթեթով նախատեսված գործողությունները:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Անդրադարձ հայկական դիցաբանությանը

ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի պատմության ուսուցչուհի Սոնա Մարգարյանը 10 «գ» դասարանի աշակերտների հետ ներկայացրեց «Հայկական դիցաբանություն» թեմայով նախագծային աշխատանք:

Նախագծային աշխատանքի շրջանակներում այցելեցինք Հայաստանի պատմության պետական թանգարան, որտեղ ծանոթացանք մեր պատմության տարբեր շրջաններին վերաբերող նյութերի և ցուցանմուշների: Աշխատանքն ամփոփեցինք մեր կազմած գրքով, որտեղ ներկայացված էին հայ հնագույն աստվածները:

Նախագծային աշխատանքը թիմային հաջողված աշխատանք էր, որի արդյունքում ձեռք բերեցինք նոր գիտելիքներ, միաժամանակ նորովի արժևորեցինք պատմության տվյալ ժամանակաշրջանը և փորձեցինք այն յուրովի ներկայացնել նախագծային աշխատանքի միջոցով:

Մենք հասկացանք, որ պետք է ժամանակ առ ժամանակ անդրադառնալ հայոց պատմությանը՝ վերլուծել ու նոր ժամանակների համապատկերում նորովի ընբռնել պատմական կարևոր փաստերն ու իրադարձությունները:

Միլենա ԱՍՐՅԱՆ
ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի
10 «գ» դասարան

ԵՐԿՈՒ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

Մարտի 8-ը կանանց միջազգային օրն է, և այն նշվում է ողջ աշխարհում: Անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հատուկ հեռուստահաղորդում է կազմակերպում, որի ժամանակ մարտի 8-ի առթիվ տարբեր ազգերի կանայք խոսում են կյանքում ունեցած իրենց ձեռքբերումների մասին՝ հատուկ շեշտելով, թե ինչ ազգից են:

Երկու կին գրողները, որոնց գրքերն ուզում եմ ներկայացնել, Հայաստանի գրողների միության անդամ են: Նրանցից առաջինը Արմենուհի Սիսյանն է, որի նոր գիրքը կոչվում է «Մեղեդին չի ավարտվում»: Դրանում զետեղված են չհորինված պատմություններ, նովելներ, էտյուդներ: Սիսյանը իր արձակ գործերում ներկայացնում է չմոռացվող սյուժեներ՝ քաղված մերօրյա առօրյայից: Գրքի խմբագիրն է ճանաչված գրականագետ Վահագն Սարգսյանը:

Արմենուհի Սիսյանն իր գրքին կցել է սեփական սեղմ նախաբանը, որից երևում է, թե ով է կյանքի սեփական ընկալումն ունեցող գրողը և ինչու չի կարող չգրել: Գրքի վերջում էլ դրել է իր մրցանակների տպավորիչ ցուցակը և ստեղծագործությունների օտարալեզու թարգմանությունների ցանկը: Այդ ցանկը խիստ տարալեզու է՝ եվրոպական լեզուներ, Ճապոնիա, Ֆիլիպիններ, Հնդկաստան, Ինդոնեզիա և այլն, մի խոսքով՝ 31 լեզուներ:

Ովքեր Փարիզի Շառլ դը Գոլ օդանավակայանից թռիչք են ունեցել այլ երկրներ, ու ժամանակը թույլ է տվել ծանոթանալ օդանավակայանում դրված շքեղ և ծավալուն հանրամատչելի ամսագրի տարբեր համարներին, որոնք ֆրանսերենով ու անգլերենով ներկայացնում են ժամանակակից ֆրանսիացի գրողների պատմվածքներն ու նովելները, կարող են հեշտությամբ նկատել, որ Արմենուհի Սիսյանի գրվածքները խիստ համահունչ են դրանց՝ միայն թե քաղված են հայ իրականությունից:

Ամեն գրող պատահական չի ընդունում իր գրքի վերնագիրը. այն չափազանց ուշադիր քննության արդյունք է ու հավանաբար համարվում է հեղինակի ամենասիրելի գործը: «Մեղեդին չի ավարտվում» պատմվածքը երաժշտի, ավելի շուտ դաշնակահարի ու դաշնամուրի կապի արտացոլումն է: Ինչ-ինչ պատճառներով դաշնամուրը պետք է վաճառվի, սակայն այդ անշունչ գործիքը անձնավորված է, ու բաժանումը նույնքան ծանր է, որքան սիրելի մարդկային էակից բաժանումը:

Հիանալի պատմվածք է «Իմ հայրենի ճնճղուկները»: Ճնճղուկները թռչունների այն տեսակն են, որ շատ տարածված են Հայաստանում, նաև աշխարհում: Սակայն Հայաստանում նրանք այնքան ընտանի ու հարազատ են, որ երբ նրանց տեսնում ես շատ հեռավոր օտար երկրներում, օրինակ՝ Արգենտինայում, Բրազիլիայում, ապա դու ճնճղուկներին համարում ես հարազատ: Պատճառն այն է, որ այդ օտար երկրներում կան բազմաթիվ այլ, այն էլ գունագեղ թռչուններ, որոնք Հայաստանում չկան: Ահա թե ինչու գրողն ասում է՝ իմ հայրենի ճնճղուկները:

Սիսյանի որոշ պատմվածքներ, որոնք կան ժողովածուում, ես կարդացել եմ «Գրական թերթի» տարբեր համարներում:

Խիստ արդիական հնչեղություն ունի «Հոգեորս» պատմվածքը: Այն ուղղված է Հայաստանում զանազան աղանդներ տարածող, մամոնային ծառայող անհատների նկարագրին: Հատկապես դրանցից շատերը որդեգրված են Եհովայի աղանդին ու համառորեն, արտասովոր գուշակություններով, իրենց թակարդն են գցում միամիտ մարդկանց՝ քանդելով հայ առաքելական ե-

կեղեցու հավատացյալների շարքերը՝ իհարկե քաղաքական նպատակներով՝ «Բաժանիր, որ տիրես» կարգախոսով:

Հոգեբանական նուրբ դիտարկումով է գրված «Կինը» նովելը: հայտնի իրողություն է իր արտաքին տեսքին հետևող կինը մտածում է շրջապատի համար լինել երևելի ու օրինակելի մինչև խոր ծերություն՝ անգամ մահացած ժամանակ: Կնոջ այդ հոգեբանական պահը հիանալի է պատկերված նովելում:

Որոշ պատմվածքներ ունեն հումորային ընդգծված շեշտեր: Դրանցից է «Ոչ մի բուդուբլինչիկ» վերնագրվածը, որն ունի նաև քաղաքական ուղղվածություն:

Երգիծական հաճույք է պատճառում «Խնձորախաղ» պատմվածքը կամ նովելը, որում եվրոպական արտաքինով մոդայիկ երիտասարդ կնոջը երկու խնձոր վաճառող գյուղացի կանայք դնում են նախ ռուսի, ապա եվրոպացու տեղ ու հայերենով ամենատարբեր պիտակներ են կպցնում նրան: Սակայն վերջում պարզվում է, որ խնձոր գնող կինը հայուհի է:

Հոգեբանական բովանդակությամբ աչքի է ընկնում «Մաշիկները» պատմվածքը, որում պատկերված են հայ ընտանիքների որոշ սովորույթներ, հատկապես հարսների հնազանդության ծայրահեղացված աստիճանը ամուսնու ընտանիքում, որը հաճախ լինում է հարսի հայրական ընտանիքն անտեսելու հաշվին:

«Ինչպես նախորդ անգամ» պատմվածքում չամուսնացած, արդեն ոչ շատ երիտասարդ աղջիկն իր միօրինակ կյանքը առավել հետաքրքիր դարձնելու համար աշխատանքից հետո ծաղիկներ է գնում իր համար և այդպես տուն վերադառնում: Բակի պարապ տղամարդիկ այդ նորությունն ընկալում են որպես կնոջ կյանքում որևէ տղամարդու հանդես գալու փաստի արտահայտություն: Նրանց աչքում տանը մնացած աղջիկը նույնիսկ հետաքրքիր արտաքին տեսք է ստանում:

«Մեղեդին չի ավարտվում» ժողովածուն պարունակում է նաև այլ ուշագրավ պատմություններ և էտյուդներ:

Ռուզան Հովսեփյանի «Հարություն» խորագրով ժողովածուն պարունակում է բանաստեղծություններ, որոնք ներկայացվում են թեմատիկ բաժանմամբ՝ 1) «Էդպես էդ ո՞ւր, երկիր» և 2) «Սիրագիր»: Գրքի խմբագիրը և առաջաբանի հեղինակը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վալերի Փիլոյանն է: Վերջինս իրավացիորեն արձանագրում է. «Ռուզանը կարողացել է մայրաբար ու բանաստեղծորեն ձևակերպել մեր երկրին բաժին հասած պատուհասն ու բանաձևը»: Իսկապես, գրքի հատկապես առաջին բաժինը տագնապներով լի սրտացավ դիտարկում է դարավոր թշնամուն պարտված հայրենիքի ներկա վիճակին: Պարտության ահավորությունը բանաստեղծուհին կապում է երեսուն տարվա քաղաքականության ձախողման հետ.

Մեր քանկ երազի տապանաքարին
Տղերքի վերջին ժպիտը ծաղկեց:

Որպես գորովագութ մայր բանաստեղծուհին սգում է և այն տղաների համար, որոնք զոհվեցին հանուն ազատության, և նրանց համար, ովքեր կանգնած են սահմանին: Պարտությունն այնպիսի ահեղ ցուրտ է երկրի համար, որ նրա մեռած ու կենդանի որդիներին բանաստեղծուհին մայրաբար խնդրում է.

Ու դաշտերով անցիր
Մինչ բառերս հասնեն,
Վրադ մի բան գցիր,
Տղերքը չընմրսեն:

Ռուզան Հովսեփյանն այսօրվա Հայաստանը համեմատում է խաչված Հիսուսի հետ, որը մեջքին տանում էր ծանր խաչափայտը և վերջում էլ խաչվում.

Անդունդ իջնող երթին

Ջայն տվեցի-գնաց,
Էդպես էդ ո՞ւր, երկիր,
Խաչդ մեջքիդ մնաց:

Բանաստեղծուհուն կարծես թե նույն խոհերն են տանջում, ինչ-որ իր գրչեղբորը՝ Խաչիկ Մանուկյանին, որն իր նոր բանաստեղծություններով նզովք է ուղղում մարդակուլ պատերազմին.

Թվում է, թե բառը
Լույս է բերում նորից,
Բայց լռում է դառը
Քո վիրավոր տողից...
Ու թռչում են նորից
Քո հանգերը հատու,
Ու զավակին հորից
Երկնքում են պատմում:

Հրաշք բանաստեղծություն է «Հայրենիք» խորագրվածը:

Ինչպես Եղիշե Չարենցն իր հանճարեղ «Ես իմ անուշ Հայաստանի...» քերթվածում խոստովանում է առ Հայաստանն ունեցած սիրո մասին, այնպես էլ մեր նորօրյա բանաստեղծուհին խոստովանում է, թե հայրենիքը միակ տղամարդն է, որին ինքն առաջինն է սեր խոստովանել:

Ծիրանը համարելով որպես հայրենիքի խորհրդանիշ, բանաստեղծուհին տագնապում է, որ եթե չլինի հայրենիքը, կարժեզրկվի և ծիրանի խորհրդանիշը ու սարսափում է, թե թշնամիներն այնքան են ջանում փոքրացնել հայրենիքը, որ այն դառնա մանկան դագաղի չափ: Այսօրինակ խոհերը բանաստեղծական գեղեցիկ պատկերներով ներկայացվում են ընթերցողին, որը ևս բանաստեղծուհու նման տենչում է հայրենիքի հարությունը, ինչպես հարություն առավ Հիսուսը:

Արմենուհի Սիսյանն ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան համալսարանը, իսկ Ռուզան Հովսեփյանը Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան բուհը: Երկու բուհերն էլ կրում են մեր երկու հանճարների անունները, և թող այդ փաստը նրանց պարտավորեցնի հայ գրականությունը առաջ մղելու մեծերի բացած լայն ու լուսավոր ճանապարհով:

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Տարեվերջյան հաշվետու ժողովում

Տարին հոբելյանական էր նաև ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի համար. բազմաթիվ իրականացված նախագծերի մասին հաշվետվություն ներկայացրին ընդհանուր ժողովում, նաև անցկացրին փոխնախագահների և քարտուղարի ընտրությունը, խոսեցին ընթացիկ հարցերի մասին:

ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը հանգամանորեն ներկայացրեց ուսանողական կառույցի առաքելությունը և նշեց, որ 30-րդ հոբելյանական տարում իրակա-

նացվել է շուրջ 500 նախաձեռնություն, որոնք միտված են եղել ուսանողների գիտակրթական ու մշակութային կյանքի հարստացմանը:

Պարույր Գալստյանն ամփոփելով ընթացիկ տարին՝ ներկայացրեց՝ գործընկերության ընդլայնում և հուշագրերի կնքում տարբեր կառույցների հետ, 120 ուսանողի ձմեռային հանգիստ բուհի Աղավնաձորի ուսումնական բազայում, պլատֆորմային քննարկումներ, միջֆակուլտետային առաջնություններ, փառատոներ: Ընթացիկ տարում կազմակերպվել են նաև այցեր գիտակրթական և մշակութային օջախներ, ցուցահանդեսներ, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված այցեր, սպորտային խաղեր, «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթի անցկացում և այլն:

Նա վստահեցրեց, որ կառույցի գործունեությունը ուսանողակենտրոն է. պատրաստ են վերհանել նրանց հուզող հարցերը, լսել խնդիրները, բողոքներն ու առաջարկները՝ դրանք ներկայացնելով համապատասխան մարմիններին: Ամեն ինչ արվել է և արվում է ի շահ ուսանողի:

Հաշվետվությանը հաջորդեց հարց ու պատասխան. ուսանողները կառույցի ղեկավարից հետաքրքրվեցին առաջիկա ծրագրերի մասին, հանդես եկան առաջարկներով:

Խորհրդի անդամների քվեարկության արդյունքում փոխնախագահներ ընտրվեցին Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, Սկզբնական կրթության ֆակուլտետների 4-րդ կուրսի ուսանողներ Հարություն Մկրտչյանն ու Կարինե Ավալյանը: Ուսանողական խորհրդի քարտուղար ընտրվեց Հատուկ կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Ջուլիա Ղազարյանը:

Վերջում Ուսանողական խորհրդի նախագահը ՈՒԽ աշխատանքներին ակտիվ մասնակցության համար շնորհակալագրեր հանձնեց բուհի 10 ֆակուլտետներին:

Մեր հարցազրույցը Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, գեղանկարիչ Ֆաենբերգ ՍԱՐԳՍՅԱՆԻ հետ

«Ես հավատում եմ գրիեկերական ուժին»,

-ասում է գեղանկարիչ Ֆաենբերգ Սարգսյանը

-Ինչո՞ւ Ֆաենբերգ: Օտար անունը Ձեզ երբևէ չի՞ ճնշել:

-Դա երկար պատմություն է: 16 տարեկանից սկսած՝ ինձ այդ հարցը տվել են տարբեր լրագրողներ, և նրանցից մեկը սխալ մեկնաբանել է, իբր հայրս մասնակցել է պատերազմին և նրան փրկել է մի գերմանացի: Իսկ իրականում պատմությունն այլ է: Ես ծնվել եմ Ղուկասյանի շրջանի Ձորաշեն գյուղում, և մի հրաշալի բժիշկ է եղել Գյումրիում՝ Ֆաենբերգ ազգանունով, հրեական ծագմամբ: Ահա ինչու ծնողներս որոշել են ինձ այդ անունը դնել:

Երբ մեծացա և արդեն նկարչության ասպարեզն ընտրեցի՝ որոշեցինք ինձ արվեստագետին բնորոշ անուն ընտրել (այդ մասին անգամ գրառում է արել ինձ նվիրած գրքում): Մարտիրոս Սարյանը անունս փոխեց, դրեց Դավիթ, բայց այդ անունը չաշխատեց: Իմ ընկերներից հայտնի նկարիչ Վարուժան Վարդանյանի նախաձեռնությամբ փորձեցին ինձ կոչել Տարոն, քանի որ ծնողներս այդ աշխարհից են, բայց դա էլ չաշխատեց:

Մի օր ընկերներիցս մեկը ֆեյսբուքը բացում է, որ նկարներս գտնի, պատահաբար բացում է հրեաների էջ, որտեղ մեծագույն գիտնականներ ու արվեստագետներ էին, և տեսնում է հայ նկարչի գործ, բացում է և տեսնում իմ նկարներից մեկը՝ վերնագրված «Բջնիի եկեղեցին», տեղադրված է այդ էջում՝ Ֆաենբերգ ազգանունով: Էջից պարզվում է, որ այդ նկարչի գործը 250 հազար դոլար արժե, իսկ հեղինակին փնտրում են և չեն կարողանում գտնել:



Մտածեցի, որ այդ պատահական համընկնումը միգուցե ինձ հաջողություն կբերի և ինձ վերանվանեցի Ֆաենբերգ:

Ահա սա է պատմությունը՝ կապված իմ անվան օտար ծագման հետ:

-Ձեր օգտագործած գույները երբեմն մռայլ են, բայց նրանց միջից միշտ մի վառ գույն, լույս է ճառագում... Ինչպե՞ս հասկանալ:

-Ես ինքս չեմ հասկանում, որովհետև դա տրամադրություն է և ստացվում է անկախ գործելուց: Ես երբեք ինձ չեմ խաբում, անում են այն, ինչ որ զգում եմ, ինչ որ իմ ներսում կա: Իմ նկարչությունը հոգևոր նկարչություն է: Եթե, օրինակ, դիմանկար եմ նկարում՝ այդ դիմանկարում կարծես լինի այդ մարդու կյանքի ամբողջ պատմությունը: Կարծես ի վերուստ տրված լինի:

Վառ գույներ էլ կան մոտս. իմ ներսի աշխարհը միշտ վառ է՝ կյանքը կա, կյանքի նկատմամբ սերը կա: Ես ամեն օր նոր մարդ եմ դառնում ու զարմացած նայում աշխարհին ու մարդկանց: Չի կարող մարդը նույն գույներով նկարի և նույն կերպ: Ամեն մարդ ունի իր գունային աուրան, և ես դա զգում եմ:

-Ձեր կակաչները հիսքանչ են. ծաղիկներից ամենաշատ նախապատվությունը տալիս եք կակաչի՞ն:

-Գիտե՞ք, այդ կակաչներն ուղղակի հանելուկ են: Երբ դու նայում ես նրանց՝ կարծես պատմություն լինի: Նրանք տարբեր են, բնության մեջ նրանցից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի՝ մեկը ժայռի վրա է, իսկ մեկը՝ մի քիչ ներքևում: Որքան նկարում ես՝ այնքան զգում ես, որ քիչ ես նկարել: Այդ զգացողությունը չի վերջանում: Դրա համար ես սիրում եմ կակաչները:

-Իսկ առհասարակ ի՞նչ եք նկարում, ո՞ր գույնն է իշխում Ձեր արվեստանոցում:

-Իշխող գույն չկա· իշխող գույնը մարդն է, տրամադրությունն է: Կարմիր շատ կա իմ գույների մեջ, դեղին, կապույտ, իշխողը հոգեվիճակն է, տրամադրու-թյունը: Ես չեմ էլ մտածում այս կամ այն գույնն ընտրել:

-Ձեր ստեղծագործություններից որո՞նք են ավելի հոգեհարազատ Ձեզ:

-Ինձ համար մի նկար կա շատ հոգեհարազատ, նկարել եմ 17-18 տարեկանում: Նկարը վերնագրել եմ «Ըմբշամարտ»: Մի պատմություն կա ՝ կապված այդ նկարի հետ: Բոլորին հայտնի Կելդիշը (ԳԱ պրեզիդենտ) մի անգամ Նիկոլայ Քոթանջյանի մոտ էր եկել ստուդիա, որտեղ ես նկարում էի: Փաթաթվել էր ինձ և խնդրում էր այդ նկարն իրեն վաճառել: Ես դեռ աշխատում էի, ես ոչ մի անգամ նկար չեմ վաճառել. մտածել եմ՝ յուրաքանչյուր նկար իմ հոգին է, իսկ հոգիս ինչպե՞ս վաճառեմ: Նվիրում եմ, դրանք տարբեր բաներ են: Բայց այժմ արդեն իմ նկարներից վաճառում եմ:

Կելդիշը եկել էր Վիկտոր Համբարձումյանի մոտից, մտել էր Հովհաննես Զարդարյանի մոտ, ապա եկել էր ստուդիա՝ Նիկոլայ Քոթանջյանից նկար գնելու: Տեսավ այնտեղ նկարում եմ: Կանազի ակումբից մինչև սպորտհամալիր ոտքով իրար հետ իջանք: Ինձ առաջարկում էր 50 հազար ռուբլի. այն ժամանակ դա մեծ գումար էր, որով կարելի էր գնել բնակարան, ավտոմեքենա: Ես, իհարկե, չհամաձայնեցի:

Երկու տարի հետո նա մարդ էր ուղարկել ինձ մոտ, որ այդ նկարը վաճառեմ: Նա կոլեկցիոներ էր՝ ուներ Պիկասոյի, Սեզանի, Մատիսի, այլ հայտնիների նկարների հավաքածո ուներ, իսկ ես այդ ժամանակ չէի հասկանում, որ ես կարող եմ այդ նկարը նրան վաճառելով կամ նվիրելով ճանաչում ձեռք բերել: Հետո ես հասկացա իմ սխալը, իսկ կողքիս արվեստագետներն էլ չհուշեցին, որ նվեր տամ. մեծ հաճույքով նվեր կտայի: Այդ ժամանակ ես անգամ չէի սովորում:

Այդ նկարը մինչև հիմա կա. ես այն կոչել եմ Կելդիշի նկար:

Մի նկար էլ ունեմ՝ ընկերոջս հետ խմում ենք: Եչկու նկարն էլ ինձ հարազատ են: Եվ ընդհանրապես բոլոր նկարներս են ինձ հարազատ: Քանի գնում, այնքան հարազատ են դառնում: Ես հետո եմ դա հասկանում:

-Հայտնիներից ո՞ւմ հետ եք աշխատել, ում եք համարում մեծ նկարիչ:

-Շատ մեծ քանդակագործ համարում եմ Ղուկաս Չուբարյանին, իսկ շատ մեծ նկարիչ՝ Հովհաննես Զարդարյանին: Վերջինս իմ գիտական ղեկավարն է եղել: Ես դեռ ուսանող էի՝ Չուբարյանն ու Զարդարյանը վիճում էին, թե ով պետք է լինի իմ ղեկավարը, և երբ ես ասացի, որ ես նկարիչ եմ և ուզում եմ՝ Հովհաննես Զարդարյանը լինի իմ գիտական ղեկավարը, Ղուկաս Չուբարյանը խռովեց և շուրջ մեկ

տարի ինձ հետ չխոսեց:

-Իսկ որևէ հետաքրքիր դեպք կպատմե՞ք՝ կապված այդ մեծերից մեկի հետ:

-Այո, մի հետաքրքիր դեպքի մասին կպատմեմ: Ես և Չուբարյանը միասին դաս էինք տալիս: Ես հիմնականում գունանկար էի դասավանդում, բայց Չուբարյանն ինձ ասաց՝ դու կանես «նավթուլ», ես՝ «անձրև»: Այսինքն՝ ես նկարի գծերը պետք է ստանայի, ինքը՝ ծավալը: Մեկ ամբողջ տարի այդպես աշխատեցինք, ու քանի որ ուսանողները գծի գաղափարը չէին հասկանում, ես նրանց սովորեցրի գծի նրբությունն ու էությունը, Չուբարյանը սովորեցրեց ծավալը: Դա եղավ ուսանողների հետ մեր երկուսի համատեղ աշխատելու հզոր ձևն ու մեթոդը: Հավելեմ, որ Ղուկաս Չուբարյանը շատ հետաքրքիր մարդ էր:

Իմ ավարտելուց հետո Հովհաննես Զարդարյանը փորձեց ինձ ուղարկել Մոսկվա՝ Մելնիկովի արվեստանոցում ուսանելու, բայց հետո ինքն այստեղ դպրոց բացեց և ինձ առաջարկեց մնալ: Դպրոցը բացել չստացվեց, բայց ես մնացի, աշխատեցի իր հետ և շատ բաներ սովորեցի նրանից:



-Ժամանակակից հայ գեղանկարիչներից անուններ կտա՞ք:

-Հայ նկարիչներ շատ կան՝ մեր բուհն ավարտած շրջանավարտներ, ինչպես հայտնի գեղանկարիչ Թաթոսը (Թադևոսյան), նաև Օշականցին, Կայծակը, Նիկոլ Աղբալյանը, որոնք իմ ուսանողներն են եղել, կան շատ շնորհալի նկարիչներ: Ժամանակն է ամեն ինչ ցույց տալիս:

-Քանի որ խոսեցիք ժամանակից, արդյո՞ք վախենում եք ժամանակից:

-Չեմ վախենում. ես միշտ հոգով ջահել եմ:

-Իսկ ինչի՞ն եք հավատում:

-Տիեզերքին: Հզոր Աստծուն: Տիեզերական ուժին: Եվ ես հավատում եմ իմ ներքին Աստծուն, որին միշտ հարազատ եմ մնացել:



Փոքր ժամանակից երազ եմ տեսել՝ ով եմ ես լինելու: Այդպես էլ եղավ և շարունակվում է լինել:

- Հե՞շտ եք մանկավարժական գործունեությունը համադրում նկարելու հետ: Քանի՞ տարի է, որ գործունեություն եք ծավալում հայկական Մանկավարժականում: Դասավանդման գործընթացում նկատո՞ւմ եք ապագա տաղանդավոր նկարիչների:

-Ես իրենցից էլ եմ սովորում: Մանկավարժությունն ինձ համար հաճելի է, իմ ուսանողների մեջ ես արթնացնում եմ իրենց էությունը՝ ինչ որ Աստված տվել է իրենց: Իմ ամբողջ նպատակը դա է եղել: Եվ դա ես անում եմ զգուշորեն, այնպես, որ իրենք էլ չեն հասկանում:

Արդեն հինգ տասնամյակ մանկավարժությամբ եմ զբաղվում, 50 տարվա դասախոս եմ:

Այսօր էլ լավ ուսանողներ կան, ցավոք վերնիսաժային մտածելակերպը նրանց խորթ չէ, ենթարկվել այդ վիճակին և կամաց-կամաց սկսում են կորչել: Դրա համար մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի նրանց կարողանանք փրկել:

-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

-Ես ուզում եմ խոսել իմ աշխատանքի արդյունքի մասին: Երբ գնացի ԱՄՆ, տեսա, թե որքան շատ ուսանողներ ունեմ այնտեղ՝ Մուսախանյան Ռաֆիկը, որ Հոլիվուդում շուրջ 60 ֆիլմերի նկարչական հեղինակ է: Այսօր արդեն նա Հայաստանում արվեստանոց ունի: Ուսանողներ ունեմ Հոլանդիայում: Հիմա եմ հասկանում իմ աշխատանքի արդյունքը, որ իմ շրջանավարտներն ինչքան շատ են ինձ գնահատում, հարգում, սիրում: Ես մի անգամ դուրս եկա Հայաստանից և տեսա՝ ինչ արժեք ունեմ:

-Դուք Ձեզ հիմա՞ եք գնահատում:

-Ես ինձ երբեք չեմ գնահատել: Ինձ թվում է ես դեռ ես երեխա եմ, դեռ նոր պիտի ստեղծագործեմ:

-Ամանորի առթիվ ի՞նչ կմաղթեք գործընկերներին, ուսանողներին, հայ ժողովրդին:

-Իմ արվեստագետ ընկերներին, բոլորին կուզեի մաղթել՝ յուրաքանչյուրն զբաղվի իր գործով, խաղաղություն լինի, և բոլորը երջանիկ լինեն:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

Ամանորյա հանդիպումներ

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաները տարեմուտին ընդառաջ հնարավորություն ունեցան առկա և առցանց հանդիպումներ ունենալ Հայաստանում բնակվող վաստակաշատ մասնագետների հետ:

Մասնավորապես, Տեղեկատվության օրվան նվիրված բաց դասին նրանք հանդիպեցին «Թումո» կենտրոնի Լեգո-ռոբոտեխնիկայի փորձագետ, մեթոդիստ, կրթական դասընթացների վարող Սուսաննա Գալստյանի հետ, որի ժամանակ քննարկվեցին արհեստական բանականության հնարավորությունները, Հայաստանում SS ոլորտի երիտասարդ մասնագետների գործունեության մասին:

Հագեցած էր նաև հաջորդ բաց դասը. 1988 թ. Սպիտակի երկրաշարժի 36-րդ տարելիցի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում Ռուսաստանի Նկարիչների միության անդամ, Ռուսաստանի Մշակույթի և արվեստի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Եվգենի Ժիլյաևի հետ, որը 1988-ին որպես փրկարարական ջոկատի հրամանատար առաջիններից էր, որ իր ահռելի ներդրումն է ունեցել աղետի հետևանքները վերացնելու գործընթացի մեջ՝ փրկելով մարդկանց կյանքեր: Ներկա էր նաև վերոհիշյալ ակադեմիայի թղթակից-անդամ, «Մոսկովյան էնցիկլոպեդիա» ֆոնդի տնօրեն Ելենա Մատյուշինան: Դպրոցի սաները հնարավորություն ունեցան առցանց շփվել նաև ՀՀ Փրկարար ծառայության գնդապետ Արա Սամվելյանի հետ, որը ներկայումս դասավանդում է «Արտակարգ իրավիճակների և Քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր» առարկան ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Թեև

հանդիպումն առցանց էր, բայց հուզիչ, քանզի նրանց հեշտ չէր վերապրել այդ օրերին կատարած իրենց փրկարարի աշխատանքը:

Տարին ամփոփվեց «Ամանորին» և «Սուրբ Ծննդին» նվիրված բաց դասերով՝ լի նոր սպասումներով, հույզերով ու հավատով: Դպրոցի սաները ելույթ ունեցան գրական-երաժշտական, պարային գեղեցիկ համարներով, որի ականատեսն եղան Ձմեռ պապն ու Ձյունանուշը՝ բերելով իրենց հետ նվերներ, խնդություն և հեքիաթային պահեր մանուկներին և նրանց ծնողներին:

Այնուհետև դպրոցի ուսուցիչները պատմեցին հայկական հին ծեսերի, ավանդույթների մասին, որոնք իրենց մեջ կրում են խորը խորհուրդ ու հոգու բարություն:

Ուսուցիչները ներկայացրին «Կենաց ծառ»-ի գաղափարի իմաստը, ավետիսյան երգերի խորհուրդը, շուրջպարերի ուժն ու նշանակությունը: Հատկանշական է, որ այդ ամենը համեմված էր տոնական ավանդական սեղանով, որտեղ իրենց պատվավոր տեղն էին գտել Տարեհացն ու թխվածքաբլիթ ,ասիլ-բասիլը, աղանձը, չիրն ու չամիչը:

Այս դասի հյուրն էր ծնող, ում երեխաներն արդեն հինգ տարի է, ինչ սովորում են «Վերածնունդ» դպրոցում: Լինելով գյումրվա ավանդական ընտանիքի հարս՝ ռուս Լյուբա Գրիգորյանը մանրամասն ներկայացրեց ինչպես թխել ավանդական գաթան, պատրաստել պասուց տոլման ու հալվան:

Ընդգծենք, որ սեփական պատմության, տոների, ավանդույթների ու ծեսերի իմացությունն առանցքային տեղ է գրավում «Վերածնունդ» դպրոցի ուսումնական ծրագրում: Այն ուղղված է հայրենիքից դուրս հայ ապագա սերունդներին իրենց արմատներին մոտ պահելուն և հայեցի դաստիարակությանը:

Մոսկվայի «Վերածնունդ» դպրոց

ՌԱՓԱԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերունգ
Չարը կորչեր, ու բարին
Բուն դրներ մեր սրտերուն:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Ազատ շընչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլեին արտ-անդաստան:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Ոտքի կանգներ Հայաստան,
Եվ կիսաքանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ոստան:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Հայ սրտի մեջ ուժ հոսեր,
Ապավինած յուր սրրին,
Հայը քյուրդեն չի սարսեր:

Երնե՞կ, թե այս Նոր տարին
Հայ ազգ ի մի գումարվեր,
Ի գլուխ Կարնո հայ ամրին,
Հայի դրոշակ ծածաներ:

Հայե՛ր, երբեք չերկմըտենք,
Կըկատարվի այդ ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սրրտեն:

Աշխատանքային հանդիպում Վրաստանում

Դեկտեմբերի 9-11-ը Վրաստանի Թելավի քաղաքում մեկնարկեց Էրազմուս+-ի «Արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասի բուհերում» PROVE նախագիծը: Եռամյա ծրագրի համակարգողը Վրաստանի Թելավիի պետական համալսարանն է:

Պաշտոնական բացմանը ներկա էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի /առցանց/ և եվրոպական գործընկեր բուհերի ներկայացուցիչներ: ՀՊՄՀ-ից մասնակցում էին Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի ղեկավարի պաշտոնակատար Անահիտ Փանոսյանը, Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիաննա Ավետիսյանն ու Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանը:

Նախագծի նպատակն է զարգացնել բարձրագույն ուսումնական հաստատությունները հարավկովկասյան 3 երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում՝ ներդնելով «Խաղաղության դասընթացներ՝ հիմնված արժեքների և գիտելիքի վրա» (VaKE), աջակցելու տարածաշրջանում խաղաղությանը նպաստող նախաձեռնություններին: Ինչպես նկատում են ծրագրի ղեկավարները՝ դրան կհաջողվի հասնել՝ ստեղծելով նոր դասընթացներ կամ փոփոխելով գոյություն ունեցողներն ու ազդեցություն թողնելով դպրոցների և համայնքների վրա:

Պաշտոնական մեկնարկին հաջորդեց աշխատատաժողովգPROVE նախագծի գործընկեր կառույցներն առկա և հեռավար ձևաչափով ներկայացրին իրենց աշխատանքային փաթեթները, եղավ հարց ու պատասխան:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև աշխատանքային խմբի ստեղծման, բաշխման և նախագծի իրականացման պլանավորման, մասնավորապես՝ առաջին տարվա գործողություններն ու վերջնաժամկետները, ինչպես նաև կառավարման ներքին հարցեր, համակարգման ընթացակարգերի և կոնսորցիումի համաձայնագրի վերաբերյալ մանրամասներ:

Նշենք, որ առաջիկայում հայաստանյան, վրաստանյան և ադրբեջանական համալսարաններն առանձին կիրականացնեն մանկավարժական կրթության կարիքի գնահատում:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Թանգարանները՝ որպես դպրոցական ուսումնական ծրագրի մաս

Թանգարանները՝ որպես դպրոցականների կրթական և անհատական զարգացման հարթակներ, մեծ ներուժ ունեն: Այնուամենայնիվ, նրանց դերը կրթական համակարգում մնում է թերագնահատված: Դասական էքսկուրսիաները չեն կարողանում տպավորել այսօրվա սովորողներին և հազվադեպ են օգտակար լինում: Ուստի թանգարանները պետք է վերանայեն ավանդական մոտեցումը և առաջարկեն նոր ձևաչափեր, որոնք կգրավեն մատաղ սերնդի ուշադրությունը:

Այս խնդրին էր նվիրված 2024թ. դեկտեմբերի 21-ին Մոսկվայում կազմակերպված Ինտերմուզեյ էքսպո միջազգային ֆորումի «Դասարան ապակու հետևում. ինչպես են թանգարանները դառնում դպրոցական ուսումնական ծրագրի մաս» նստաշրջանը, որին որպես խոսնակ հրավիրված էի մասնակցելու նաև ես:

Փորձի փոխանակման նպատակով նստաշրջանի մասնակիցներին ներկայացվեց բուհի թանգարանի գործունեությունն ապագա ուսուցիչներին թանգարանային մանկավարժության հիմունքներին ծանոթացնելու, ուսումնական պրակտիկայի ընթացքում ա-

շակերտների համար գործնականում թանգարանային կրթական ծրագրեր կազմակերպելու, համալսարանի բոլոր ֆակուլտետների հետ ակտիվ համագործակցելու, բուհի շրջանավարտների հետ մշտական կապ ունենալու, դասընթաց-վարժանքներ կազմակերպելու և թեմայի վերաբերյալ ուսումնական ձեռնարկներ հրատարակելու վերաբերյալ:

Ֆորումի կազմակերպիչների կարծիքով Համալսարանի պատմության թանգարանի փորձը հետաքրքիր է նաև այն տեսանկյունից, թե ինչպես ինտեգրել թանգարանները «դպրոց-բուհ-մասնագիտություն» կրթական շղթայի մեջ:

Գործընկերներն առաջարկեցին թանգարանի տնօրենին՝ ներկայացնել առկա փորձը նաև գիտական հոդվածի տեսքով:

Ալվարդ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի տնօրեն

Հայաստանի առաջին դրամների օրինակները և Ցարական ժամանակների դրամապերեծումը (1917 թ.)

Հայաստանի տարածքում հայտնաբերված ամենահին մետաղադրամները վերաբերում են Ք.ա. VI-V դարերին: **Դրանք հոնիական Միլետոս քաղաքում թողարկված երկու արծաթե դիօբոլոսներն են, որոնք հայտնաբերվել են Էրեբունիի պեղումներից:**

Մետաղադրամները Հայաստանում տարածում են գտնում Ք.ա. III դարից **սկսած: Հելլենիստական դարաշրջանում ռազմական արշավանքների և միջազգային առևտրի միջոցով Հայաստան էին մտնում Ալեքսանդր Մակեդոնացու, սելևկյան, աթենական, պարթևական, հռոմեական, կապադովկյան և այլ ծագման դրամներ:**

Ալեքսանդր Մակեդոնացու ոսկյա մետաղադրամ:

Սելևկյանների մետաղադրամներ, 3-1 դդ մ.թ.ա.:

Կոմմագենյան թագավորության մետաղադրամ, Երվանդունիների թագավորությունից, 2-1 դդ մ.թ.ա:

Պարթևական մետաղադրամ, Ք.ա.3-րդ դար:

Երվանդյան **հարստության հայ արքաները Ք.ա. III դարի կեսից Ծոփքում սկսում են թողարկել պղնձե դրամներ,**

Շամ Երվանդական: *Արշամ:*

Նկ. 1. Ծոփքի թագավորություն, արքա Արսամես, մ.թ.ա. III դարի երրորդ քառորդ, պղնձե դրամ:

որոնք այսօր մեզ հայտնի ամենավաղ հայկական դրամներն են:

Դիմերես՝ **արքա Արսամեսի կիսադեմը սրագագաթ գլխանոց վզկալով:**

Դարձերես՝ **հեծյալ արքան՝ ձախ ձեռքում երկու նիզակ, երրորդ նիզակը նետում է թռչող առյուծի վրա, վերևում հունարեն մակագրություն՝ Արքա Արսամեսի:**

Նկ. 2. Ծոփքի թագավորություն, արքա Արսամես, մ.թ.ա. III դարի երրորդ քառորդ, պղնձե դրամ:

Դիմերես՝ **արքա Արսամեսի կիսադեմը:**

Դարձերես՝ **Դիոսկուր երկվորյակների գլխարկները՝ խաչազարդ, երկու կողմից հունարեն մակագրություն՝ «Թըձլխժմձ ըիձըՕկղ» (Արքա Արսամեսի):**

Արտաշեսյան **հարստության ժամանակաշրջանում (Ք.ա. 189 թ.-Ք.հ. 1 թ.) Մեծ Հայքում հայոց արքաների կողմից թողարկվել են պղնձե և արծաթե դրամներ: Տիգրան Բ Մեծի օրոք (Ք.ա. 95-55 թթ.) դրամահատությունն իրականացվում էր թագավորության մի շարք քաղաքներում՝ Արտաշատում, Տիգրանակերտում, Մծբինում, Անտիոքում, Դամասկոսում և այլն:**

Նկ. 3. Մեծ Հայք, Արտաշեսյան թագավորություն, Տիգրան Բ Մեծ, Ք.ա. 95-55 թթ., արծաթե տետրադրախմա:

Դիմերես՝ **արքա Տիգրան Բ Մեծի կիսադեմը հինգ ծոպավոր հայկական խույրով, որը զարդարված է երկու շրջված ու իրար նայող արծիվներով, որոնց միջև աստղ է:**

Դարձերես՝ **Տիխե աստվածուհին պարսպաձև թագով՝ ժայռին նստած, ձեռքին արմավենու ճյուղ, իսկ ոտքերի տակ Օրոնտես գետի աստվածությունը՝ լողացող մարդու կերպարով, հունարեն մակագրություն՝ Արքայից արքա Տիգրանի:**

Նկ. 4. Մեծ Հայք, Արտաշեսյան թագավորություն, Տիգրան Բ Մեծ, Ք.ա. 95-55 թթ., արծաթե տետրադրախմա:

Դիմերես՝ **արքա Տիգրան Բ Մեծի կիսադեմը հինգ ծոպավոր հայկական խույրով, որը զարդարված է երկու շրջված ու իրար նայող արծիվներով, որոնց միջև աստղ է:**

Դարձերես՝ **Տիխե աստվածուհին պարսպաձև թագով՝ ժայռին նստած, ձեռքին արմավենու ճյուղ, իսկ ոտքերի տակ Օրոնտես գետի աստվածությունը՝ լողացող մարդու կերպարով, հունարեն մակագրություն՝ Արքա Տիգրանի:**

Դիմերես՝ **արքա Տիգրան Բ Մեծի կիսադեմը հինգ ծոպավոր հայկական խույրով, որը զարդարված է երկու շրջված ու իրար նայող արծիվներով, որոնց միջև աստղ է:**

Դարձերես՝ **Տիխե աստվածուհին պարսպաձև թագով՝ ժայռին նստած, ձեռքին արմավենու ճյուղ, իսկ ոտքերի տակ Օրոնտես գետի աստվածությունը՝ լողացող մարդու կերպարով, հունարեն մակագրություն՝ Արքայից արքա Տիգրանի:**

Հելլենիստական ոճով ձևավորված հայկական դրամների պատկերագրությունն ու մակագրություններն ամբողջովին համահունչ էին ժամանակաշրջանի ոգուն. դիմերեսին միապետի դիմապատկերն էր, դարձերեսին՝ դիցաբանական խորհրդանշաններ, արքայի անունն ու տիտղոսը հունարեն:

Նկ. 6. Մեծ Հայք, Արտաշեսյան թագավորություն, Արտավազդ Բ, մ.թ.ա. 55-34 թթ., արծաթե տետրադրախմա:

Դիմերես՝ **արքա Արտավազդ Բ-ի կիսադեմը հինգ ծոպավոր հայկական խույրով՝ զարդարված աստղով:**

Դարձերես՝ **քառաձի մարտակառք և դա վարող թագակիր անձնավորությունը, հունարեն մակագրություն՝ (Արքայից արքա Արտավազդի աստվածային:**

Նկ. 7. Մեծ Հայք, Արտաշեսյան թագավորություն, Արտավազդ Բ, մ.թ.ա. 55-34 թթ., արծաթե դրախմա:

Դիմերես՝ **արքա Արտավազդ Բ-ի կիսադեմը հինգ ծոպավոր հայկական խույրով՝ զարդարված աստղով:**

Դարձերես՝ **քառաձի մարտակառք և դա վարող թագակիր անձնավորությունը, հունարեն մակագրություն՝ Արքայից արքա Արտավազդի:**

Արտաշես 2-րդ, մ.թ.ա. 1-ին դար. արծաթ:

Նկ. 8. Մեծ Հայք, Արտաշեսյան թագավորություն, Արտաշես Բ, մ.թ.ա. 30-20 թթ., պղնձե դրամ:

Դիմերես՝ **արքա Արտաշես Բ-ի կիսադեմը հինգ ծոպավոր հայկական խույրով:**

Դարձերես՝ **շան պատկեր, արամերեն մակագրություն:**

Արտաշեսյան հարստության անկման ժամանակաշրջանում թողարկվել են Արտաշատ մայրաքաղաքի դիցուհի Տիխեի, հասկի և այլ պատկերներով քաղաքային պղնձե դրամներ, որոնց եզակի օրինակները ներկայացնում են Արտաշատի դրամաթողարկումները:

Նկ. 9. Արտաշատի քաղաքային թողարկում, պղնձե դրամ

Դիմերես՝ քաղաքի հովանավոր աստվածուհի թագակիր Տիխեի կիսադեմը:

Դարձերես՝ **աստվածուհի Նիկեն, աջ ձեռքում՝ պսակ, հունարեն մակագրություն՝ Արտաշատ մայրաքաղաքի համայնքի կողմից:**

Արշակունյաց **հարստության ժամանակներից (66-428 թթ.) դրամներ որոշակիորեն հայտնի չեն: Արշակունիների իշխանության սկզբնական շրջանում Հայաստանում դրամաշրջանառությունը կատարվել է հիմնականում Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության դրամներով:**

Արտաշատի պեղումներից հայտնաբերված Հռոմեական մետաղադրամ:

Շարունակելի

Արամ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ

Հ.Գ. Հունարեն անվանումները չեն դրվել:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ